ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
52	Զաբոտա Դեզ Պլյուս	Զաբոտա Դեզ Պլյուս	Զաբոտա Դեզ Պլյուս	ԶԱԲՈՏԱԴԵԶ	Ախտահանիչ խտանյութ ՝ մակերեսների, գույքի, սպիտակեղենի, լաբորատոր սպասքի եւ այլ պարագաների ախտահանման եւ մաքրման համար, ինչպես նաև նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար։ Բաղադրությունը – ՉԱՄ, գուանիդինի ածանցյալներ, տրիամիններ, ֆերմենտներ (ամիլազա, պրոտեազա, լիպազա),

					ինչպես նաև ոչ իոնոգեն ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), կոռոզիայի ինհիբիտորներ, բուրանյութ (ընտրողաբար) և այլ ֆունկցիոնալ հավելումներ, ջուր: Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չի պարունակում որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտրանոց տարաներով: 1լիտր խտանյութից պատրաստվում է մինչև 0,4%-անոց 250 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ աղիքային վարակները՝ թեստավորված Escherichia coli, Salmonella typhimurium-ի վրա, ներհիվանդանոցային վարակների հարուցիչները՝ թեստավորված Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus-ի վրա, հատուկ վտանգավոր վարակները՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, սիբիրյան խոցի և այլ, անաէրոբ վարակները, լեգիոնելոզի հարուցիչները և տուբերկուլոզի միկոբակտերիան՝

					թեստավորված Mycobacterium terrae-ի վրա), վիրուսների (ներառյալ ռինովիրուսները, նորովիրուսները, ռոտավիրուսները, կորոնավիրուսները, այդ թվում SARS-CoV-2, ադենովիրուսները, ընդերային և արտաընդերային հեպատիտների, այդ թվում՝ Ա, Բ, Ց, Ե հեպատիտի, պոլիոմիելիտի, ՄԻԱՎ վիրուսները, մարդու գրիպի, պարագրիպի վիրուսները, այդ թվում՝ «թռչնի» H1N1 և «խոզի» H5N1, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսները, հերպեսի, ցիտոմեգալովիրուսային վարակի և այլ վիրուսները), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի ախտածին սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Aspergillus niger-ի վրա) նկատմամբ, սպորոցիդ ակտիվությամբ (թեստավորված Bacillus cereus-ի և Bacillus subtilis-ի վրա): Միջոցն օժտված է օվոցիդ հատկությամբ մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստերի և օոցիստերի, հելմինթների ձվերի և թրթուրների) նկատմամբ: Միջոցն օժտված է ապաբաղարկիչ

					ակտիվությամբ ՌՆԹ/ԴՆԹ ամպլիկոններով բաղարկված օբյեկտների նկատմամբ ազդեցությունը մինչև 15 րոպեում : Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ՝ առնվազն 24 ժամ: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է առնվազն 18°C : Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 50 օր է, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ նյութի pH - 8,0: Վտանգավորության աստիճանը - 3-րդ, 4-րդ դաս:: Կիրառումը սրբելու, ցողելու եւ թրջելու եղանակով:: Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական , ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ ընդհանուր պիտանելության ժամկետի առնվազն՝ ½ :

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
52	Забота Дез Плюс	Забота Дез Плюс	Забота Дез Плюс	ЗАБОТАДЕЗ	